

Կառավարման պլաններ

ԲՄԱԳ-ի արդյունքների գործնական կիրառում

ԲՄԱԳ-ի միջոցով իրականացվում է Ամուլսար ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների գնահատում, ինչպես նաև տվյալ ռիսկերի և ազդեցությունների կանխարգելման, նվազեցման և վերահսկման համար անհրաժեշտ մեղմացման և կառավարման միջոցառումների սահմանում: ԲՄԱԳ-ի վերջին զուխը՝ Բնապահպանական և սոցիալական կառավարման պլաններ (ԲՄԿՊ) անվանմամբ, ուղղված է ապահովելու գնահատման արդյունքների գործնական կիրառումը:

ԲՄԿՊ-ը ներառում են Լիդիանի քաղաքականությանն ու կանոնակարգերին համապատասխանող մի շարք համակարգված կառավարման պլաններ, որոնք ներկայացնում են մեղմացման միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ գործնական քայլեր: Այն հանդիսանում է ԲՄԱԳ-ի քաղաքականությունը որոշող փաստաթուղթ և ներկայացնում է Ծրագրի իրականացման ողջ ընթացքում բնապահպանական և սոցիալական կայունություն ապահովելուն ուղղված Լիդիանի պարտավորությունը:



ԲՄԿՀ

ԲՄԿՊ-ը նախատեսվում է իրականացնել Լիդիանի գործող Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ԲՄԿՀ)-ի միջոցով, որը ստեղծվել է ISO-14001 չափանիշի համաձայն և որն ապահովում է բնապահպանական և սոցիալական կատարողականի շարունակական բարելավման համար անհրաժեշտ կազմակերպչական հիմքեր: Շինարարության համար մշակվում է հատուկ

ԲՄԿՀ:

Կառավարման պլանների ցանկը

- Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան
- Առողջապահության և անվտանգության պահպանման պլան
- Ծրագրի ազդեցության կառավարման պլան
- Արտակարգ վիճակների պատրաստվածության և արտահոսքերի արձագանքման պլան
- Տրանսպորտի կառավարման պլան
- Ցիանիդի կառավարման պլան
- Բնապահպանական մշտադիտարկման պլան
- Պինդ թափոնների կառավարման պլան
- Օդի որակի, աղմուկի և վիբրացիայի կառավարման պլան
- Համայնքային, առողջապահության և անվտանգության պլան
- Համայնքային զարգացման պլան
- Մշակութային ժառանգության կառավարման պլան
- Հանքի նախնական ռեկուլտիվացիայի, փակման և վերականգնման պլան
- Թթվային ապարի դրենաժի կառավարման պլան
- Կենսաբազմազանության գործողությունների պլան
- Կենսաբազմազանության կառավարման պլան
- Մակերևութային ջրերի կառավարման պլան
- Հողի իրավունքի ձեռքբերման և կենսակերպի վերականգնման պլան
- Ածխածնի և էներգիայի կառավարման պլաններ
- Աշխատողների կացարանային ապահովման կառավարման պլան
- Կապալառուների գործունեության կառավարման պլան